

## ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հարցազրույցը

### "Դե Ֆակտո" հասարակական-քաղաքական ամսագրին

- Պարո՛ն Խաչատրյան, ինչպիսի՞ն էր 2010 թվականը Սյունիքի մարզի համար, ի՞նչ կարևոր ձեռքբերումներ եք արձանագրել:

2010 թվականը Սյունիքի մարզի համար որակում եմ որպես հաջող տարի: Ինչպես միշտ, այնպես էլ այս տարվա ընթացքում, նույնպես, Սյունիքի հիմնախնդիրների լուծման գործընթացը շարունակեց մնալ Հանրապետության Նախագահի, ՀՀ Կառավարության ու մարզպետի տեսադաշտում: Բավական է նշել, որ 2010 թվականի ընթացքում, մի շարք անգամ Հանրապետության Նախագահը, վարչապետն ու կառավարության անդամներն այցելեցին Սյունիք, տեղում ծանոթացան հիմնախնդիրներին, գործընթացներին, մասնակցեցին ռազմավարական ու սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն ունեցող մի շարք օբյեկտների բացման արարողություններին:

Մարզպետարանի աշխատակազմում տարվա արդյունքներն արդեն ամփոփվել են և 2010 թվականին մարզպետի գործունեության ու մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ հաշվետվությունը գրավոր ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ուղղակի կարող եմ նշել մի քանի կարևորագույն իրադարձություններ և թվեր, որոնք շատ բան կասեն տարին Սյունիքի մարզի համար հաջող որակելու գնահատականի օգտին:

Ինչպես գիտեք, 2010 թվականի հոկտեմբերի 16-ին բացվեց Տաթևի ճոպանուղին, որը հսկայական ներդրում է Սյունիքի զարգացման գործում և արդեն իսկ մեծ խթան է հանդիսանում այստեղ զբոսաշրջությունը զարգացնելու համար: Կարծում եմ՝ պատահական չէ, որ այսպիսի չափանիշներով ճոպանուղին առաջին հերթին հենց կառուցվեց Սյունիքի մարզում, քանի որ մարզն ունի զբոսաշրջային զգալի ներուժ, որը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Ճոպանուղին եկավ բազմապատկելու այս զբոսաշրջային ներուժը և, ինչպես տեսնում եք, կառուցվեց հենց մարզի զբոսաշրջության զարգացման համար նշանակալի և գլխավոր դեր խաղացող Տաթևի վանական համալիրի հարևանությամբ:

Գործում բացվեցին բժշկական և ինվազիվ սրտաբանական կենտրոնները: Հայաստան Համահայկական Հիմնադրամի միջոցներով «Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցման նպատակով տարվա ընթացքում կատարվել է 199,2 մլն. դրամի աշխատանք: 11,9 մլն. դրամով հիմնանորոգվել է մայրուղուց դեպի սրտաբանական կենտրոն տանող ճանապարհահատվածը: 116,1 մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Կապանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի մասնաշենքում:

2010 թվականի գործարկվեց Կապանի տարածաշրջանի Հանքասարի պղնձամոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի շահագործման համալիրը, որն իրականացնում է «Լեռ-Էքս» ՍՊԸ-ը: Միաժամանակ իրականացվում է հանքաքարի վերամշակման ֆլոտացիոն ֆաբրիկայի կառուցումը՝ համապատասխան թափոնամբարով ու մաքրված ջրի հետադարձ օգտագործման եղանակի կիրառմամբ: Նախատեսված է տարեկան 150 հազար տոննա հանքաքար արդյունահանել, իսկ առաջիկա տարիներին ձեռնարկության արտադրական հզորությունը հասցնել 450 հազ.

տոննայի: Նորաբաց ձեռնարկությունը կհամագործակցի մարզի մյուս հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ: Հանքավայրի շահագործումն առաջին հերթին լուրջ ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այն գտնվում է սահմանամերձ գոտում: Բացի դրանից, համալիրի շահագործմամբ բացվել են աշխատատեղեր, ինչը կնպաստի մարզում գործազրկության մակարդակի իջեցմանը: Ներկայումս Հանքասարում աշխատում է շուրջ 300 մարդ, գալիք տարում նրանց թիվը նախատեսված է հասցնել 500-ի:

Հայ-կանադական առևտրաարդյունաբերական պալատի ու Կանադայի տեղեկատվայնացման միջազգային ակադեմիայի հետ ստորագրվեց համագործակցության վերաբերյալ պայմանագիր: Համագործակցությունն ուղղված է լինելու Սյունիքի մարզի զարգացմանը, մի շարք՝ կրթության, առողջապահության, զբոսաշրջության, լեռնահանքային ու վերամշակման ոլորտներում ծրագրերի իրականացմանը:

Ըստ ստորագրված փաստաթղթի՝ պալատն աշխատանքներ է իրականացնելու ներդրումների ներգրավման, միջազգային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպման, Հայաստանում նախագծերի իրագործմանը կանադական առաջատար ընկերությունների եւ կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

Կանադայի տեղեկատվայնացման միջազգային ակադեմիան նախատեսում է Հայաստանում գտնվող իր մասնաճյուղի միջոցով Սյունիքի մարզում ստեղծել լեռնահանքային եւ լեռնավերամշակման, կառավարման բնագավառների մասնագետների պատրաստման ու վերապատրաստման ուսումնական կենտրոն:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, «Շեն» ԲՀԿ-ի միջոցով հաստատվել և իրականացվել է Մեդրիի տարածաշրջանի գյուղական զարգացման ծրագիրը շուրջ 1.8 մլն շվեյցարական ֆրանկ ընդհանուր գումարով: Ծրագրի մեկնարկը տրվել է 2010թ. հոկտեմբերի 1-ին:

Հայաստանի հետ Գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում Գերմանական KFW բանկի, ՀՀ բնապահպանության նախարարության հետ կնքված համաձայնագրի շրջանակներում սկսվել է Շիկահողի կենսալորտային արգելոցի և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը՝ 6.0 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով: Ծրագրի մեկնարկը տրվել է 2010 հոկտեմբերի 11-ին:

2010թ. ստորագրվեց համաձայնագիր՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ Գորիս քաղաքում 22 բնակարանանոց նոր շենքի կառուցման համար: Շենքի շինարարության սկիզբը դրվել է 2010թ. դեկտեմբերի 20-ին:

«Լավագույն տնօրեն», «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթում սյունեցի երեք մանկավարժներ հաղթող ճանաչվեցին՝ նվաճելով առաջին պատվավոր տեղերը: Հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ ՀՀ վարչապետի կողմից երկու մանկավարժներ պարգևատրվեցին «Շնրոլետ» մակնիշի ավտոմեքենաներով և իսկ մեկը՝ ժամանակակից համակարգչով:

2010թ. Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ Գորիս քաղաքում մեծ շուքով նշվեց քաղաքի հիմնադրման 140 ամյակը: Տոնի կապակցությամբ Գրիգոր Տաթևացու հրապարակում բացվեց Տաթևացու հուշարձանը, իսկ Մխիթար Սպարապետի հրապարակում գործարկվեց երգող շատրվանը:

Քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում 2010 թվականի ընթացքում մարզում իրականացվել են շուրջ 9 մլրդ. 950 մլն. դրամի համաշինարարական աշխատանքներ, որից՝ 2 մլրդ. 640 մլն. դրամի կապիտալ շինարարության և 7 մլրդ. 310 մլն. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման

աշխատանքներ: Միայն ճանապարհաշինարարության բնագավառում կատարվել է ավելի քան 7,0 մլրդ դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանք:

2009 թվականի համեմատությամբ մարզում իրականացված համաշինարարական աշխատանքների ծավալն աճել է 6 տոկոսով: Հատկանշական է, որ 2010 թվականին աշխատանքների ընդհանուր ծավալի մեջ աճել է կապիտալ շինարարության ծավալը: Եթե 2009 թվականին այն կազմել է 10,9% կամ 1 մլրդ. 22 մլն. դրամ, ապա 2010 թվականին այն հասցվել է 26,5%-ի կամ 2 մլրդ. 640 մլն. դրամի:

Ընթացիկ տարում ամբողջությամբ վերանորոգվել են Սյունիքի մարզպետարանի վարչական շենքի դիմային հատվածը, ինչպես նաև շենքի աշխատասենյակների մի մասը:

2010 թվականի ընթացքում միջազգային և այլ կազմակերպությունների կողմից մարզում կատարված ներդրումների ծավալը կազմել է 20 մլրդ դրամից ավելի:

Ավելորդ չեմ համարում նշել նաև, որ ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N562-Ն որոշմամբ սահմանված կարգով, մարզպետների 2010 թվականի գործունեության գնահատման արդյունքում ամենաբարձր միավորներ է ստացել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետը, որը նույնպես համարում եմ հաշվետու տարում Սյունիքի մարզի համար կարևոր ձեռքբերում:

**- ՀՀ կառավարությունը մարզերի համաչափ զարգացմանն ուղղված ծրագրեր է իրականացնում: Սյունիքի մարզում արդեն նկատելի են այդ ծրագրերի արդյունքները:**

Այո, կառավարությունը մարզերի համաչափ զարգացմանն ուղղված ծրագրեր միշտ ձեռնարկել ու ձեռնարկում է: Վերջին շրջանի այդ ձեռնարկումներն արտացոլված են ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրում, որը 2003 թվականից Հայաստանում իրականացվող ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակն է և ըստ էության երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրն է, ինչպես նաև մարզերի (այդ թվում նաև Սյունիքի մարզի) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում: Այստեղ, հիմնական գերակայությունների շարքում ուշադրության են արժանացել նաև Հայաստանում տնտեսական աճի արագացմանը զուգընթաց խորացող տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման խնդիրները, որը ենթադրում է, որ անհրաժեշտ կլինի էականորեն արագացնել մարզերի տնտեսական զարգացման տեմպերը: Այդ տեմպերն ապահովելու նպատակով կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են են մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնց մեջ էական դեր է խաղում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումների ուղղումը դեպի մարզեր, ինչպես նաև դրանց միջմարզային բաշխման հավասարեցման խրախուսումը:

Համաձայն փորձագիտական գնահատումների՝ 2004-2010թթ. մարզերի համաչափ զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման առումով Սյունիքի մարզում առաջընթացը միշտ էլ նկատելի է եղել՝ հիմնականում պայմանավորված լեռնահանքային արդյունաբերության արագ զարգացմամբ:

Ձեռքբերումներն արձանագրվում են յուրաքանչյուր տարի:

Իհարկե, չնայած Սյունիքի մարզում գրանցված այս դրական տեղաշարժերին, մարզն այսօր, ունենալով ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևոր դիրք, բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով Հանրապետության ամենախոշոր վարչական և տնտեսական միավորներից մեկը, դեռևս մնում է որպես Հանրապետության համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես ոչ

լիարժեք յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հիմնախնդիրներ ունեցող տարածքներից մեկը:

**- Կապանում բազմաբնակարան շենք է կառուցվում՝ նախատեսված երիտասարդ ընտանիքների համար: Որքանո՞վ է կարևոր այդ նախաձեռնությունը մարզի համար:**

Ցանկանում եմ շեշտել, որ շենքի կառուցումն իրականացվում է Հանրապետության Նախագահի բարձր հովանու ներքո, ՀՀ կառավարության տարածքային համաչափ զարգացման հայեցակարգի դրույթների մեջ մտնող Հանրապետության երիտասարդ ընտանիքներին մատչելի պայմաններով բնակարան հատկացնելու ծրագրի շրջանակներում և կնպաստի Հանրապետության, այդ թվում՝ նաև մարզի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը՝ խթանելով ծնելիությունը, կասեցնելով արտագաղթը:

Շենքը կառուցվում է «Աջակցություն երիտասարդ ընտանիքների բնակարանաշինությանը» սոցիալական ծրագրի շրջանակներում, որի բնակարանները շուկայականից անհամեմատ էժան գներով տրամադրվելու են Սյունիքի մարզի երիտասարդ ընտանիքներին: Կառուցապատող ընկերությունները պարտավորվել են ինքնարժեքին մոտ գներով բնակարաններ առաջարկել մարզի երիտասարդներին:

Աշխատանքներն արդեն սկսված են և առաջին շենքի կառուցումը կավարտվի մինչև 2012 նոյեմբերի 30-ը: Մյուս երկու մասնաշենքերի շինարարությունը կմեկնարկի հաջորդ տարվա փետրվարին և կավարտվի 2013թ.: Ծրագրի իրագործման ընթացքում աշխատանքով կապահովվի ավելի քան 600 մարդ:

Համալիրը բաղկացած կլինի երեք մասնաշենքից: Ծրագրի ընդհանուր արժեքը 7,6 մլրդ դրամ է:

**- Ինչպիսի՞ն է Սյունիքի մարզի տնտեսական վիճակը: Ճգնաժամն արդեն հաղթահարվե՞լ է:**

Կարծում եմ՝ մեր Հանրապետությունում, այդ թվում նաև Սյունիքում արդեն սկսվել է տնտեսական ճգնաժամի հետևանքների թոթափման ժամանակահատվածը: Բոլորս էլ գիտենք, որ 2009-2010 թվականները դժվար տնտեսական տարիներ էին թե համաշխարհային տնտեսության, թե Հայաստանի և, իհարկե, այդ թվում նաև Սյունիքի մարզի համար: Սակայն, չնայած դժվարություններին, երկրի բարձրագույն ղեկավարության կողմից կատարված ճիշտ և համարժեք քայլերի շնորհիվ Հայաստանի Հանրապետության համար այս տարիներն անցան խաղաղ ու բնականոն հունով՝ առանց որևէ քաղաքական կամ բարոյահոգեբանական ցնցումների: Դեռ ավելին՝ իմ կատարած դիտարկումների արդյունքում ես եկա այն համոզման, որ մեր ժողովուրդը տարեցտարի դառնում է էլ ավելի միասնական, էլ ավելի միակամ, էլ ավելի նպատակասլաց և լիովին պատրաստ է դիմագրավելու ցանկացած մարտահրավերների:

Ինչպես գիտեք՝ Սյունիքն առավել աչքի է ընկնում հանքարդյունաբերության ոլորտում և տնտեսական ճգնաժամը որքան էլ ցանկանայինք, չէր կարող բացասական հետևանքներ չթողնել նաև Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության ու դրա հետ կապված ճյուղերի վրա: Սակայն այստեղ ևս, ի փառս սյունեցիների և ի փառս մեր բարձրագույն ղեկավարության, պետք է նշել, որ Հանրապետության Նախագահի ու կառավարության հոգատար վերաբերմունքի շնորհիվ հնարավոր եղավ մեղմել ճգնաժամի ազդեցությունները: Հատկապես կարևորում եմ Հանրապետության Նախագահի հանձնարարականները, կառավարության անմիջական արձագանքներն ու

մարզպետարանի համակարգված աշխատանքը Սյունիքի հանքարդյունաբերության բնագավառում իրավիճակի վերահսկողությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր եղավ ոլորտում խուսափել լայնածավալ կրճատումներից և հազարավոր ընտանիքներ փրկել սոցիալական դժվար կացության մեջ հայտնվելու ճակատագրից: Դեռ ավելին՝ ճգնաժամի տարիներին ոլորտում և սպասարկող ճյուղերում դրվել են տնտեսության զարգացման նոր հիմքեր, այն է՝ մարզում ստեղծվել են 11 նոր ձեռնարկություններ՝ հանքարդյունաբերության, հիդրոէներգետիկ, տեղական հումքի վերամշակման, սննդի և թեթև արդյունաբերության բնագավառներում, որտեղ շուրջ 510 նոր աշխատատեղերի ներդրմամբ գործազրկության մակարդակը մարզում իջել է 1%-ով:

Ճգնաժամի հետևանքները թոթափվում են նաև մյուս բնագավառներում:

Անցած մի քանի տարիները բարենպաստ չէին գյուղատնտեսության համար: Բնական աղետների, տևական ցրտահարությունների հետևանքով գյուղատնտեսության առանձին ճյուղեր տուժեցին: Գյուղատնտեսության մեջ նկատվեց աճի տեմպերի նվազում: Սակայն մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների համակարգված գործողությունների արդյունքում, կարծում եմ, այս ոլորտում նույնպես աստիճանաբար հաջողություններ կարձանագրվեն:

#### **- Մարզում զարգացման ինչպիսի՞ հեռանկարներ եք տեսնում:**

Մարզի զարգացման հեռանկարները նախանշված են ՀՀ կառավարության՝ Սյունիքի մարզկենտրոնում կայացած արտագնա նիստում 2009 թվականի հունիսի 26-ի 782-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում: Կարծում եմ՝ դրան համահունչ, Սյունիքում կշարունակվի զարգանալ ավանդական դարձած ճյուղը՝ լեռնահանքային արդյունաբերությունը, միաժամանակ կզարգանա էներգետիկայի ոլորտը՝ հատկապես փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման ուղղությամբ, կշարունակվի համայնքների գազիֆիկացումը, մեծ թափ կստանա զբոսաշրջության զարգացումը, որը կապված է Տաթևի ճոպանուղու կառուցման հետ, կշարունակի զարգանալ փոքր և միջին բիզնեսը, որի խթանումը մշտապես կգտնվի մարզպետի ուշադրության կենտրոնում, աշխատանքներ կտարվեն գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ:

#### **- Այսօր առավել շատ ինչի՞ կարիք ունի սյունեցին:**

Ինչպես ողջ հայ ժողովրդին, այնպես էլ սյունեցուն այսօր պետք է միմիայն խաղաղություն և երկրում քաղաքական կայունություն: Մնացած հարցերը սյունեցին կլուծի իր խաղաղ և ստեղծագործ աշխատանքի շնորհիվ:

#### **- Ի՞նչ ծրագրեր եք նախատեսում իրականացնել 2011 թվականին: Դրանք ո՞ր ոլորտներին են ուղղված լինելու:**

Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրն այսօր մեզ համար կարևոր փաստաթուղթ է: Ծրագրում համակարգված կերպով ներառված են մարզի բոլոր կարևորագույն խնդիրները, որոնց լուծումը կապահովի մարզի կայուն զարգացումը:

Նորմատիվ ակտ լինելուց բացի, մարզի զարգացման ծրագիրը միաժամանակ Սյունիքում ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ

կազմակերպություններին, գործարարներին, Մփյուռքի մեր հայրենակիցներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Սյունիքի մարզպետարանն ակնկալում է, որ նշված շահագրգիռ սուբյեկտների համար ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկները հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ է փոխշահավետ համագործակցության՝ հանուն Սյունիքի մարզի կայուն զարգացման:

Ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 71.9 մլրդ. դրամ, արտարժույթով նախատեսվող ՄԶԾ ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն. ԱՄՆ դոլար և 208.9 մլն. եվրո: Համայնքների քառամյա ծրագրերով ոլորտային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 28.5 մլրդ. դրամ:

2010 թվականին մարզի զարգացման ծրագրով նախատեսված մի շարք խնդիրներ լուծում ստացան:

Այժմ Սյունիքի մարզպետարանում կազմվում է մարզի զարգացման ծրագրի 2011 թվականի տարեկան աշխատանքային պլանը, որը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի հաստատմանը:

2011 թվականին մեր ուշադրության կենտրոնում լինելու է հատկապես այս պլանի իրականացումը, որում ընդգրկված են սոցիալական ոլորտները, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը, գյուղատնտեսությունը, բնապահպանությունը և այլն:

Մասնավորապես՝ աշխատանքներ են տարվելու կանանց զբաղվածության և աշխատատեղերով ապահովման հիմնախնդրի լուծման, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, ճանապարհային հատվածներում սողանքների վերացման ուղղությամբ:

**- Ըստ Ձեզ՝ որո՞նք են այն առանձնահատկությունները, որոնցով սյունեցին տարբերվում է այլ մարզերի բնակիչներից:**

Մենք մի ազգ ենք և որևէ նշանակություն չունի, թե հայ մարդը որ երկրացի է կամ որ մարզից: Կարծում եմ՝ յուրաքանչյուր հայ, որտեղացի էլ որ լինի, երբևէ չպետք է այս հարցերին նշանակություն տա: Իհարկե, մայրաքաղաքում, Մփյուռքում և մարզերում ապրող մարդիկ միշտ էլ ունեն ինչ-որ առանձնահատկություններ ու տարբերություններ, սակայն դրանք փոխլրացնում են միմյանց և ստեղծում են Հայ մարդու ընդհանուր կերպարը: Այս առումով, այո, սյունեցին նույնպես ունի որոշակի առանձնահատկություններ: Իմ ողջ կյանքի ընթացքում և հատկապես ՀՀ Սյունիքի մարզպետ աշխատած այս շուրջ 7 տարիների ընթացքում ես մշտապես զգացել եմ, որ սյունեցին ունի յուրահատուկ հայրենասիրություն, ազատատենչություն, ավանդապաշտություն, ոգի, միասնականություն և պետական մտածողություն: Հաստատապես կարող ենք արձանագրել, որ մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը, անկախ սոցիալական դիրքից ու քաղաքական դիրքորոշումից, իր աշխարհայացքի մեջ մեծ և նշանակալի տեղ է տալիս մեկ երկրամասի, աշխարհատարածքային միասնական մեկ միավորի մասնիկը լինելու գաղափարին, որն իր հերթին նպաստում է Հայաստան երկրի և հայկական արժեքների նկատմամբ ունեցած հայրենասիրության ամրապնդմանը: Այս հանգամանքն օգնում է հանրապետական ու մարզային մակարդակներում ծառայած խնդիրների առավել ռացիոնալ լուծմանը:

**- Նոր սերունդն իր մեջ կրո՞ւմ է այդ հատկանիշներն ու արժեքները, և ի՞նչ ներուժ էք տեսնում նրա մեջ, որ ավագ սերնդի մեջ չէք տեսնում:**

Այո, սյունեցու այս առանձնահատկությունները թվարկելիս ես նկատի եմ ունեցել նաև նոր սերնդին: Նոր սերնդի մեջ նույնպես ես տեսնում եմ հայրենասիրություն, ազատատենչություն, միասնականություն, պետական մտածողություն և յուրահատուկ ավանդապաշտություն: Բհարկե, սերունդների մեջ տարբերություններ միշտ էլ լինում են, բայց դրանք մեր սերունդների պարագայում էական նշանակություն չեն կարող ունենալ, քանի որ գենետիկորեն սյունեցին հակված է հայրենասեր, ազատատենչ ու միասնական լինելու: Եթե խոսելու լինենք սերունդների ներուժի տարբերության մասին, ապա կարող ենք նշել, որ այդ տարբերությունն էլ չկա, ուղղակի բոլորիս հայտնի մի ժամանակահատված կար, երբ ավագ սերնդի ներուժը շատ հարցերում ինքնադրսևորման հնարավորություններ չունե՞ր՝ ազգասիրության, հայրենասիրության գաղափարների նկատմամբ որոշակի քաղաքական հետապնդումների պատճառով, իսկ նոր սերունդն այդ առումով խնդիրներ չունի, քանի որ նրա ներուժն ազատ դրսևորվում է Ազատ ու Անկախ Հայրենիքում և այսօր նոր սերնդի համար բոլոր պայմաններն առկա են ազատ զարգանալու համար:

Այսօր նոր սերնդի կայացման կարևոր նախապայմաններից է երիտասարդության հարցերի բնագավառներում զարգացման հիմնական գերակայությունների՝ սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումը՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ ազգին ու հասարակությանն առավել լիարժեք օգտագործելու համար: Այս բոլորը կան և մարզի երիտասարդությունն այսօր ազատ ինքնադրսևորվում է՝ աստիճանաբար միավորվելով հայրենանվեր գաղափարների շուրջ: Դրա վառ ապացույցն է կազմավորված «Դավիթբեկյան ուխտեր» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, որի մեջ ընդգրկված ավելի քան 2000 երիտասարդներն ունեն ակտիվ կենսադիրք, ռազմահայրենասիրական պատշաճ կեցվածք, ազգային արժեքների համակողմանի և խորը իմացություն: «Դավիթբեկյան ուխտեր» երիտասարդական-հայրենասիրական նման կազմակերպության ստեղծումը կարևոր է այն առումով, որ նախորդ տարիներին մարզի երիտասարդությանը տարբեր պատճառներով չհաջողվեց միավորվել կազմակերպական այնպիսի կառույցի մեջ, որ վայելեր սյունիքյան հասարակության ճնշող մեծամասնության և հատկապես երիտասարդության հավատն ու վստահությունը: Այսօր, կարծում եմ այդ վստահությունը կա, և հատկապես այս կազմակերպության միջոցով, մարզի խնդիրների լուծմանն օժանդակելու գործում երիտասարդությունն էլ ավելի կհամախմբվի:

**- Հիմնվելով ներկայում առկա փաստերի վրա՝ ինչպիսի՞ն էք տեսնում Սյունիքի մարզը մի քանի տարի անց:**

Ներկա իրողություններն ու գործընթացները մեզ վստահեցնում են, որ Սյունիքն օր-օրի զարգանում է և այդ զարգացումները վերջին շրջանում արագ են ընթանում: Այս առումով վստահ եմ, որ դրական դինամիկան կպահպանվի և իրականացվող ծրագրերի արդյունքում Սյունիքն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած տարածքներից մեկը՝ արդյունքում էլ ավելի կբարձրանա սյունեցիների բարեկեցությունը: